ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 154-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԷԴԳԱՐ ԱՎՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի ,,Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, № 912-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով, որ Էդգար Ավոյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել մեկ տարվա ընթացքում Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ Մասիս քաղաք Մ.Հերացու փողոց թիվ 5/12 հասցեում գտնվող հասարակական շինությունը /մակերես՝ 203.8 քմ/ և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0,01019 հա բնակավայրերի նպատակային հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 03-003-0107-0112/ ուղղակի վաճառքով օտարել Էդգար Ավոյանին:

2. Հասարակական շինության համար մուծման վճարը կազմում է 3611540 /երեք միլիոն վեց հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր քառասուն/ ՀՀ դրամ/ 1քմ-ի արժեքը 17721 /տասնյոթ հազար յոթ հարյուր քսանմեկ / ՀՀ դրամ:

3. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 452.620 /չորս հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ /1 քմ-ի արժեքը 4441,8 /չորս հազար չորս հարյուր քառասունմեկ ամբողջ ութ/ ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ